

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ԳՈՒՅՔԵՐ ԱՄՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 5-րդ
մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին
որոշում է.

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող MAZ մակնիշի
հատուկ աղբատար ավտոմեքենան (նույնականացման համարը՝ X5H45610PR000047,
հաշվառման համարանիշը՝ 722 CS 61) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով
ամրացնել «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման
գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող FAW մակնիշի
ավտոաշտարակ ավտոմեքենան (նույնականացման համարը՝ LFNA8MCFXRAE03832,
հաշվառման համարանիշը՝ 902 CS 61) անժամկետ, անհատույց օգտագործման
իրավունքով ամրացնել «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների
սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը: